

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.374>

## The monuments of the borderline village of Choratan and the results of the excavations of Saint Hripsime church

Arman Nalbandyan

<https://orcid.org/my-orcid?orcid=0009-0003-4965-2691>

Scientific Research Center of Historical and Cultural Heritage

SNCO of the Ministry of ESCS RA, Yerevan

[Hnagetyan18@gmail.com](mailto:Hnagetyan18@gmail.com)

**Keywords:** Tavush, Choratan, monument, Saint Hripsime Church, khachkar, inscription.

*The village of Choratan of the Tavush Province of RA, is located 90 km from the provincial capital, 22 km southeast of the city of Berd, on the southeastern slope of the Khndzorut mountain range. Modern Choratan was formed by 12 families who arrived from Artsakh in the mid-18th century. Since then, the village has undergone several emigrations (in the 1770s, 1800s, 1850s), and part of the population was resettled to other settlements. In the 1830s, the village was one of the largest communities in the region. However, the history of the village's activity as a medieval settlement has much deeper roots, which is clearly evidenced by a number of medieval monuments preserved on its administrative territory. And the fact that the community had its own spiritual and educational center in the Middle Ages is evidenced by Saint Hripsime Church in the center of the village. The church, as we'll see, has close connections with one of the largest spiritual centers in the region\_Khoranashat Monastery. As part of the restoration project of the church by local benefactors, the expedition of the Scientific Research Center of Historical and Cultural Heritage (the expedition leader\_ A. Nalbandyan) conducted archaeological research and excavations of the site in 2016 and 2019. Excavations not only gave important results from the point of view of archeology and epigraphy, but also clarified the issue of the architectural structure of the church.*

**Մահմանամերձ Չորաթան գյուղի հուշարձանները և Սբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումների արդյունքները**

Արման Նալբանդյան

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ, Երևան

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 374-387.



Received: 21.09.2024

Revised: 06.10.2024

Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

**Հիմնաբառեր`** Տավուշ, Չորաթան, հուշարձան, Սբ. Հռիփսիմե, եկեղեցի, խաչքար, արձանագրություն:

ՀՀ Տավուշի մարզի Չորաթան գյուղը գտնվում է մարզկենտրոնից 90 կմ հեռավորության վրա, Բերդ քաղաքից 22 կմ հարավ-արևելք, Խնձորուտի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջին: Ժամանակակից Չորաթանի ձևավորման հիմքում ընկած են XVIII դ. կեսերին Արցախից ժամանած 12 ընտանիքներ: Այդ ժամանակներից ի վեր գյուղում մի քանի անգամ (1770, 1800, 1850-ական թթ.) տեղի են ունեցել արտագաղթեր և բնակչության մի մասը տեղահանվել է այլ բնակավայրեր: 1830-ական թթ. գյուղը տարածաշրջանի ամենախոշոր համայնքներից մեկն էր: Սակայն գյուղի` որպես միջնադարյան բնակավայրի, գործունեության պատմությունը շատ ավելի խոր արմատներ ունի, որի ցայտուն վկաները նրա վարչական տարածքում պահպանված մի շարք միջնադարյան հուշարձաններն են: Իսկ այն, որ համայնքը միջնադարում ունեցել է իր հոգևոր-կրթական օջախը, վկայում է գյուղի կենտրոնում գտնվող Սբ. Հռիփսիմե եկեղեցին, որը, ինչպես կտեսնենք, սերտ առնչություններ ունի տարածաշրջանի խոշորագույն հոգևոր կենտրոններից մեկի` Խորանաշատի վանական համալիրի հետ: Տեղացի բարերարների կողմից եկեղեցու վերականգնման ծրագրի շրջանակներում Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկավար` Ա. Նալբանդյան) 2016 և 2019 թթ. տարածքում իրականացրեց հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ, որոնք ոչ միայն կարևոր արդյունքներ սվեցին հնագիտության և վիճագրագիտության տեսանկյունից, այլև հստակեցրեց մտքին եկեղեցու ճարտարապետական հորինվածքի հարցում:

### Памятники приграничного села Чоратан и результаты раскопок церкви Святой Рипсимэ

**Арман Налбандян**

ГНКО «Научно-исследовательский центр историко-культурного наследия»

при Министерстве ОНКС РА, Ереван

**Ключевые слова:** Тавуш, Чоратан, памятник, церковь Святой Рипсимэ, хачкар, эпиграфические надписи.

Село Чоратан Тавушской области РА расположено в 90 км от административного центра, в 22 км к юго-востоку от города Берд, на юго-восточном склоне Хндзорутского горного хребта. Современный Чоратан сформирован 12 семьями, прибывшими из Арцаха в середине 18-го века. С этих пор село претерпело несколько эмиграций (1770-е, 1800-е, 1850-е годы), и часть населения была переселена в другие населенные пункты. В 1830-х годах село было одним из крупнейших общин региона. Однако история деятельности села как средневекового поселения имеет гораздо более глубокие корни, яркими свидетелями чего является ряд средневековых памятников, сохранившихся на его административной территории. А о том, что община имела свой духовно-просветительский центр в Средневековье, свидетельствует церковь Святой Рипсимэ в центре села,

## Հնագիտություն և ազգագրություն/ Archeology and Ethnography

### The monuments of the borderline village of Choratan and the results of the excavations of Saint Hripsime church

#### Մահմանամերձ Չորաթախ գյուղի հուշարձանները և Մբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումների արդյունքները

*который, как мы увидим, имеет тесные связи с одним из крупнейших духовных центров региона\_монастырем Хоранашат. В рамках проекта реставрации церкви местными благотворителями, экспедиция Научно-исследовательского центра историко-культурного наследия (руководитель экспедиции\_А. С. Налбандян) в 2016 и 2019 годах проводил археологические исследования и раскопки на территории церкви, которые не только дали важные результаты с точки зрения археологии и эпиграфики, но и внесли ясность в вопросе архитектурной структуры церкви.*

\* \* \*

**Ներածություն:** Չորաթախի հուշարձանները: Գյուղի վարչական տարածքում փաստագրված են Ք. ա. I հազարամյակի մի քանի դամբարանադաշտեր, իսկ «Տավրի պաշ» կոչվող վայրում՝ Ք. ա. VI-V դդ. թվագրվող ամրոց: Գյուղում, իհարկե, գերակշռում են միջնադարյան հուշարձանները՝ հանձինս XII-XV դդ. կոթողներով հարուստ գերեզմանոցների՝ «Ներքին շեն», «Բրդաղ» և այլ տարածքներում: Դրանցում գրանցված են գրանիտե և ֆելզիտե մի շարք խաչքարեր, որոնք աչքի են ընկնում իրենց կոթողայնությամբ: Առանձնանում են գյուղի մեջ, բնակելի տներից մեկի մոտ գտնվող երկու զանգվածեղ ժայռաբեկորները, որոնց հարթեցված նիստերին կան X-XI դդ. բնորոշ խաչքարային հորինվածքներ: Վերջին տարիներին այդ խաչքարերի անկյուններում տեղացի քանդակագործ-վարպետի կողմից արվել են զլխաքանդակներ: Բացի միջնադարյան կոթողներից Չորաթախում աչքի են ընկնում XIX-XX դդ. բնակելի տներն ու տապանաքարերը, որոնք հիանալի կերպով իրենց մեջ արտահայտում են միջնադարից եկած ավանդույթները: Որոշ դեպքերում տապանաքարերի հարթաքանդակները բավականին գեղարվեստորեն բուսականացված են, քանդակված են միահյուսվող սիրամարգերի և այլ թռչունների պատկերներ: Տարածված է հարսի և փեսայի, ձիավորի, հրեշտակների պատկերագրությունը: Տապանաքարերի արձանագրությունները աչքի են ընկնում բանաստեղծական և դրամատիկ ոճերով:

**Մբ. Հռիփսիմե եկեղեցին:** Ժողովրդական շրջանակներում գյուղամիջյան եկեղեցին հայտնի է Մբ. Հռիփսիմե, իսկ գիտական գրականության մեջ՝ Մբ. Հովհաննես անուններով: Այժմյան կանգուն, սակայն բավականին խարխլված և վտանգված կառույցը ուշ միջնադարին բնորոշ ուղղանկյուն հատակագծով միանավ սրահ է (երկ.՝ 17.87 մ, լայն.՝ 8.25 մ, աղ. 1., նկ. 1-2): Գրեթե ամբողջությամբ շարված է կոպտաստաշ գրանիտե զլաքարերով: Տեղ-տեղ պատերի մեջ ագուցված են սրբատաշ, քանդակագարդ և արձանագիր քարեր: Երկու պատուհան է բացված հյուսիսային պատի և չորս պատուհան՝ հարավային պատի մեջ: Խոշոր մուտք ունի արևմտյան ճակատին, որը, ինչպես և հյուսիսային ճակատի արևելյան եզրին բացված մուտքը հետագայի հավելումներ են: Եկեղեցու գլխավոր մուտքը ի սկզբանե եղել է հյուսիսային ճակատին, որը, սակայն, փակվել և գործածությունից դուրս է եկել: Մուտքի ճակատակալ քարին փորագրված է շինարարական եռատող արձանագրություն՝ եկեղեցու ժամանակի և կառուցողի վերաբերյալ կարևորագույն վկայություններով, ըստ որի այն կառուցվել է 1682 թվականին (աղ. 1., նկ. 3):

Ակնհայտ է, սակայն, որ 1682 թվականից հետո եկեղեցին առնվազն երկու անգամ ենթարկվել է վերակառուցման, ընդ որում առաջին անգամը հարավային և արևելյան կողմերում գրեթե հիմնավոր: Անգեն աչքով էլ նկատելի են պատերի վերաշարումներ, կատարված զանազան աղավաղումներ, ճարտարապետական փոփոխություններ և հավելումներ: Այդ ամենի մեջ

հատկապես ցավալի են պատերի մեջ առկա բազմաթիվ կոթողների ագուցումները և քողարկումը սվաղի շերտերի տակ:

Եկեղեցու առաջին նկարագրությանը մենք հանդիպում ենք Մակար Բարխուդարյանի տարեգրությունում. «Եկեղեցին սուրբ Յովհաննէս. ծածքն փայտաշեն և առանց փոքր խորանի...» [Բարխուդարյան 1995, 211]: Չորաթանում պահպանվել են մեծ թվով XIX դ. վերջին քառորդի տներ, որոնք ունեն փայտե գերանակապ տանիքներ, զարդարանքի տարրեր և պատուհանների շրջանակների այնպիսի կառուցվածք, ինչպիսին Սբ. Հովհաննէս Եկեղեցու պատուհաններն են: Ակնհայտ է, որ Եկեղեցու առաջին վերանորոգումը կատարվել է մոտավորապես նույն ժամանակ, երբ լայն թափով վերաբնակեցվել ու կառուցապատվել է գյուղը:

Խորհրդային տարիներին Եկեղեցին կրկին ենթարկվել է «վերանորոգումների»՝ գործելով որպես ակումբ, ապա մի կարճ ժամանակամիջոց այստեղ է տեղափոխվել գյուղի մանկապարտեզը, որից հետո այն վերածվել է պահեստի: Այդ տարիներին ամբողջությամբ վերափոխվել է Եկեղեցու խորանը՝ վերածվելով ակումբի ուղղանկյուն բեմի: Այս ամենը բավականին աղճատել է Եկեղեցու նախնական տեսքը:

### **Եկեղեցու որմերի մեջ ագուցված խաչքարերն ու արձանագիր քարերը:**

Վերակառուցումների ու միջամտությունների արդյունքում Եկեղեցու որմերը հագեցել են խաչքարերով, արձանագիր որմնաքարերով ու ճարտարապետական մանրամասներով, որոնք, սակայն, պատերի մեջ գերազանցապես օգտագործվել են որպես շինաքար: Դրանք մեծ մասամբ ագուցված են քանդակագարդ կամ արձանագիր նիստերը շրջած, օգտագործված՝ առանց որևէ հստակ սկզբունքի: Դրանց մեջ առկա են արձանագրություններ, որոնք համաժամանակյա են Եկեղեցուն և որոնցում հիշատակվում են շինարարությանը մասնակցած անձինք: Շատ են լայնացող թևերով փորաքանդակ որմնախաչերը, որոնք հիմնականում արված են բացվածքների ճակատներին կամ երկու կողմերում:

Ստորև ներկայացված են պատմամշակութային առանձնակի արժեք ներկայացնող նմուշները, որոնցից առաջին հերթին, իհարկե, հիշատակման արժանի է մուտքի ճակատակալ քարը.

1/ Ճակատակալ քար- հյուսիսային մուտքի ճակատին, չափերն են՝ 44x136 սմ: Քարի կենտրոնում փորագիր խաչ է, որի երկու կողմերում՝ արձանագրությունը. «ԹՎ[ԻՆ] ՌՃԼԱ/ ՅԱՆՌԻՆ ԱՅ ՇԻՆԵՑԱԻ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻՍ ՁԵՌԱՍԲ ՄԵՂ[Ա]Յ/ՊԱՐՏ ՈՎԱՆԷՍ ԵՊ[ԻՍ]Կ[ՈՊՈՍ]Ի ԽՈՐԱՆԱՇԱՏՍՈՒ» [Բարխուդարյան 1995, 211; Ղաֆադարյան 2007, 277-278, աղ. 1., նկ. 3]: Եկեղեցու այս փաստացի անձնագիրը մեզ հաղորդում է տվյալներ՝ այն կառուցողի և կառուցման ժամանակի մասին: Ցավոք արձանագրությունում բացակայում է Եկեղեցու անունը: Հովհաննէս Եպիսկոպոսի անձը նույնպես դժվար է պարզել, քանի որ Խորանաշատի վիմական արձանագրությունները պատկանում են 13-րդ դարին [Ղաֆադարյան 2007, 281]: Չի բացառվում, որ Հովհաննէս Եպիսկոպոսի անվան հիշատակությունն է պատճառ հանդիսացել Եկեղեցին Սբ. Հովհաննէս կոչելու համար: Անվանի վիմագրագետ Մակար Բարխուդարյանը նույնպես անդրադարձել է այս արձանագրությանը՝ նշելով այն «արտաքուստ դրան արևմտեան կողմում» է, ինչը վիճելի է դարձնում քարի նախնական տեղի հարցը:

2/ Ճակատակալ քար- հյուսիսային պատի արևմտյան պատուհանի ճակատին, չափերն են՝ 35x75 սմ: Մակերեսին կա եռատող արձանագրություն. «ՍԲ. ԽԱՉՍ Բ[ԱՐԵ]Խ[Ո]Ս/ ՈՎԱՆԷՍ

**Հնագիտություն և ազգագրություն/ Archeology and Ethnography**

**The monuments of the borderline village of Choratan and the results of the excavations of Saint Hripsime church**

**Մահմանամերձ Չորաթան գյուղի հուշարձանները և Մբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումների արդյունքները**

ԵՊ[ԻՍ]Կ]ՈՊՈՍ]Ի ԱՇԱ/ԿԵՐՏ ՏԲ ԴԱՎԹԻՆ» [Բարուդարյան 1995, 211: Ղաֆադարյան 2007, 278]: Կասկած չկա, որ Դավիթը եկեղեցին կառուցող Հովհաննես եպիսկոպոսի աշակերտն է, ուստի արձանագրությունը կարելի է թվագրել XVII-XVIII դդ.: Բարխուդարյանը նշում է քարի նախնական տեղը. «խորանի հյուսիսային կողմում»:

3/ Որմնաքար-եկեղեցու հյուսիս-արևելյան անկյունում, չափերն են՝ 18.5x31x67 սմ: Մակերեսին կրում է քառատող արձանագրություն. «ՄԲ. ԽԱՉՍ Բ[ԱՐԵ]Խ[Ո]Ս/ ՈՒՍՍԱ ՇԻՐԱ/ՔԻՆ ՈՐ ՇԻՆԵՑ ԵԿԵՂԵՑԻՍ» [Ղաֆադարյան 2007, 278]: Ղաֆադարյանը արձանագրությունը համարում է ժամանակակից Հովհաննես եպիսկոպոսի արձանագրությանը: Ուստա Շիրաքը XVII դ. եկեղեցու շինող վարպետն է (կամ վարպետներից մեկը):

4/ Որմնաքար-եկեղեցու հյուսիս-արևելյան անկյունում, չափերն են՝ մոտ 35-55 սմ: Արևելահայաց նիստին կրում է երկտող արձանագրություն. «ՄԲ. ԽԱՉՍ Բ[ԱՐԵ]Խ[Ո]Ս/ ՍՈՒԱԻԻՆ»: Արձանագրությունը կարելի է համադրել Հովհաննես եպիսկոպոսի և նրա աշակերտ Տեր Դավթի արձանագրությունների հետ և թվագրել XVII դ. վերջով: Քարը արևելյան և հյուսիսային նիստերին կրում է մեկական փորագիր խաչ՝ որոնք իրենց ձևով տիպիկ են այս եկեղեցու մուտքերի և պատուհանների շարվածքների խաչերին:

5/ Որմնաքար- գլխավայր ագուցված է արևմտյան մուտքի աջ կողմում, չափերն են՝ մոտ 29x76 սմ: Ունի երկտող արձանագրություն, որի զգալի մասը փակված էր կրածեփի շերտով: Այստեղ մասնավորապես գրված է. «ԵՏ ՈՒՍՍԱ ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՈՎ/ ՅԻՇԱՍԱԿ ԻԻՐ ԿԵՆԴԱՆԵ[Ա]Ց ԵԻ [ՆՆՁԵՑԵԼՈՑ]...»: Ալեքսան Գրիգորովի հիշատակին թողնված այս արձանագրությունը արժեքավոր վկայություն է եկեղեցու՝ XVIII-XIX դդ. վերակառուցված լինելու մասին:

Բացի վերը նկարագրված օրինակներից եկեղեցու պատերի մեջ կան ևս մի քանի արձանագիր որմնաքարեր, որոնց արձանագրությունները մեզ են հասել թերի կամ աղճատված: Դրանց մեջ կարելի է ընթերցել հետևյալ գրությունները. «-ԱԽԱՆԻՆ», «Յ[Ի]ՇԵԱ? Յ[ԻՍՈՒ]Ս Ք[ԻՐԱՍՈ]Ս-/ Տ[Է]Ր ՔՐԻՔՈՐ», «ԱՅՍ ՍԵՂԱՆՍ ...» և այլն:

Հատուկ ուշադրության կարիք ունեն պատերի մեջ ագուցված խաչքարերը: Դրանք ֆելզիտից կերտված, նույնատիպ և գրեթե նույնաչափ (մոտավոր՝ բարձր.՝ 55 սմ, լայն.՝ 45 սմ, հաստ.՝ 10 սմ) կոթողներ են և պատկանում են խաչքարային մշակույթի միննույն դպրոցին կամ ուղղությանը: Բեկորների թիվը շատ է, իսկ գրեթե ամբողջական պահպանվածները մի քանիսն են: Դրանցից այն նմուշները, որոնց քանդակագարը երեսները արտաքուստ տեսանելի են եղել, գրեթե ամբողջովին եղծվել են, հորինվածքները՝ քերվել (աղ. 2, նկ. 4): Իսկ նրանք, որոնք ծածկվել են կրի հաստ շերտով, բարեբախտաբար, լավ են պահպանվել (աղ. 2, նկ. 5): Հորինվածքը, բացի ալիքագարդ եզրագոտու մեջ առնված եռաբլթակ խաչաթևերով ավագ խաչից, կրում է նաև խաղողի ողկույզների, եռաճյուղ արմավագարդերի, խաչաձողի և փոքր, շրջանաձև վարդյակների բարձրաքանդակներ: Հատկապես արժեքավոր է եկեղեցու հարավային ճակատի խաչքարերից մեկը, որի աջակողմյան նիստին պահպանված է դժվարընթեռնելի արձանագրություն: Չնայած որ բավականին եղծված է, և վրան առկա են ժամանակակից գրություններ, սակայն լավ են պահպանվել առաջին երեք տողերը. «ՈՒԳ(1194)/ ԹՎԱԿԱՆ[ԻՆ]/ ՀԱՅՈՑ...»: Այն Չորաթանի եկեղեցու տարածքում գտնվող հնագույն թվագիր արձանագրությունն է, վկայություն՝ կարևոր

փաստի, որ XII դ. վերջերին տարածքում կար հանգստարան, հետևաբար նաև սրբատեղի, որի մոտ պետք է ձևավորված լինեին գերեզմանոցը<sup>1</sup>:

**Պեղումների գլխավոր արդյունքները:** Եկեղեցուց մոտ 50 սմ հարավ, բացվեցին եկեղեցու հարավային պատի հնագույն հիմքերը, ինչը հաստատում է, պատի ժամանակին քանդվելու և վերաշարվելու փաստը (աղ. 3, նկ. 2): Նորահայտ հիմքերը հարում են մայր ապարին, որը և, կարծում ենք, եղել է պատի տեղափոխման և վերաշարման հիմնական պատճառը:

Թերևս, կարևորագույն հայտնագործությունը կատարվեց եկեղեցուց արևելք: Պարզվեց եկեղեցու արևելյան պատը՝ ողջ խորանի հետ միասին, նույնպես քանդվել և վերաշարվել է, զգալիորեն կրճատելով եկեղեցու երկարությունը: Պեղումների արդյունքում բացվեց խորանը, հաստատվելով, որ եկեղեցին ունեցել է արտաքուստ շեշտված ուղղանկյուն աբսիդ: Այն ունի 3,70-4,10 մ երկարություն, 5,90 մ լայնք, պատերի հաստությունը՝ 1-1,10 մ: Հիմքերը պահպանվել են 70 սմ բարձրությամբ (աղ. 3, նկ. 1):

Խորհրդային տարիներին, երբ եկեղեցին շահագործվել է որպես սկումբ, նրա խորանը վերածվել է եկեղեցական կառույցին խիստ անհարիր ուղղանկյուն բեմի: Եկեղեցու ներսում աշխատանքները տվեցին չափազանց կարևոր արդյունքներ: Մասնավորապես եկեղեցու արևելյան պատից մոտ 1 մետր հեռավորությունում ի հայտ եկավ խորանի 60 սմ բարձրությամբ բեմառեջքը (աղ., նկ. 3), հյուսիսային կողմում՝ երկու սրբատաշ քարերից շարված աստիճաններով:

Խորհրդային տարիներին եկեղեցու հյուսիսային ճակատին բացված մուտքի հիմքում հայտնաբերվեց մկրտության ավազանը (չափերն են. երկ.՝ 89 սմ, լայն.՝ 61 սմ), որը կիսով չափ մտնում է հյուսիսային պատի տակ: Ինչպես ուսումնասիրությունները ցույց տվեցին, այն գտնվում է իր նախնական տեղում, սակայն ծածկվել է նոր բացված մուտքի շահագործման պատճառով:

Ասյանի հատվածում տեղ-տեղ բացվեցին սալաքարեր, որը սակայն բավարար հիմք չէ ընդունելու, որ եկեղեցին սալահատակ է ունեցել: Ավելի հավանական է, որ եկեղեցու թե՛ ասյանը և թե՛ ողջ սրահը ունեցել են կրապատ հատակ:

Հարավային պատի մոտ, 30 սմ խորությունում բացվեցին իրարից գրեթե հավասար հեռավորության վրա (2,60-3,00 մ) դրված, անկանոն եզրերով, հարթ մակերեսով սալաքարեր՝ փայտե պան խարիսխներ (աղ. 4, նկ. 4): Մրանք հարավային պատից հեռու են ընդամենը 30-50 սմ, սակայն չպետք է մոռանալ, որ պատը վերաշարված է դեպի ներս և իրականում այս խարիսխները հին պատի պահպանված հիմքերից հեռու են 1,50-1,70 մ: Մոտ նույն հեռավորությունում էլ բացվեցին հյուսիսային կողմի խարիսխները:

**Արձանագիր տապանաքարերը:** Եկեղեցուց հյուսիս-արևելք փոքր տապանաբակն է՝ XIX դ. տապանաքարերով (աղ. 2, նկ. 2), որոնք ծածկված էին հողի հաստ շերտով, և պեղումներից առաջ մասամբ երևում էին դրանց գագաթները:

1/ Հարթ սալատապան- եկեղեցուց 80-90 սմ դեպի հյուսիս (ֆելզիտ, երկ.՝ 132 սմ, լայն.՝ 62 սմ, բարձր.՝ 21-26 սմ, աղ. 2, նկ. 1): Տապանաքարը՝ մակերեսը հորինվածքով և զարդարատարրերով, աչքի է ընկնում ոչ միայն տարածաշրջանի տապանաքարերի մեջ, այլև XIX դ. կոթողային արվեստի անկրկնելի նմուշ է, որում պահպանվել են միջնադարյան

<sup>1</sup> Այս խաչքարը գրանցված է Չորաթանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում (պետ. ցուցիչ՝ 10.53/7.1): Ցուցակում նշված է, որ խաչքարը գտնվում է արևմտյան պատին, մուտքից՝ հարավ, ինչը չի համընկնում խաչքարի ներկայիս գտնվելու վայրի հետ:

**Հնագիտություն և ազգագրություն/ Archeology and Ethnography**

**The monuments of the borderline village of Choratan and the results of the excavations of Saint Hripsime church**

**Սահմանամերձ Չորաթան գյուղի հուշարձանները և Մբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումների արդյունքները**

ավանդույթներով եկած ճոխության և պարզության համադրումը: Ողջ մակերեսն առնված է հյուսկեն զարդագոտի-շրջանակի մեջ: Քարի արևելյան կողմում պատկերված է չընդհատվող երկլար հյուսվածքներից կազմված գեղաքանդակ խաչը, որը բուսականացված է հասկապես հիմքի և գագաթի հատվածներում: Խաչի երկու կողմերում ուշագրավ են միատերև արմավազարդերը: Խաչն առնված է քանդակազարդ սյուներով ու պահունակներով կամարակապ խորանի մեջ, որից վերև ելնդագիր տառերով գրված է [ՄԲ.] Խ[Ա]ՉՍ, իսկ կամարի ներքո՝ ԲԱՐ[Է]ԽԱԻՍ: Խաչքարային հորինվածքի տակ՝ քարի արևմտյան հատվածում, փորագրված է վեցատող արձանագրություն. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՒ ԳԵՐ[Ե]ԶՄԱՆ/ ՄԱՀՈՒ ՊԱՏԿԱՍ ԵՒ ՀՐԱԺ[Ա]ՐՄԱՆ/ Տ[Է]Ր ՅՕՀԱՆ - Տ[Է]Ր ՅՕՀԱ/ՆՆԷՍԵԱՆ\* 1843. 1/8 ՌՄՂԲ», իսկ դրա տակ՝ փոքր տառերով. «ԿՐԵՑ ԻԻՐ ՈՐԴԻ/ ՎԱՐԴԱԶԱՐՆ»: Ուշագրավ է, որ տարեթիվը գրված է ն՝ թվերով, ն՝ թվատառերով, ինչը կարելի է համարել թվատառերից թվանշաններին անցման ժամանակաշրջանի դրսևորում: Թվատառերից ներքև կա ժայռապատկեր հիշեցնող կենդանու փոքրաչափ պատկեր:

2/ Օրորոցաձև տապանաքար- եկեղեցու հյուսիս-արևելք (կարմիր տուֆ, բարձր.՝ 50 սմ, երկ.՝ 125 սմ, լայն.՝ հիմքի մոտ 23 սմ, գագաթում՝ 14 սմ): Տապանի արձանագիր՝ հյուսիսահայաց նիստի վերին երկու անկյուններում առկա են քառորդ վարդյակներ և այլ զարդատարրեր: Քառատող արձանագրությունը հետևյալն է. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂՈՒՄԱՇԻՆ/ ԿԵՆԱԿԻՑՆ Տ[Է]Ր ՅՕՀԱՆԵԱՆ ՎԱՐ/ՏԱԶԱՌ. ՈՎ ՈՔ ՀԱՆՏԻՊԻՔ ԱՍԷՔ/ ՈՂՈՐՄԻ 1860 ԱՄԻ»: Ղումաշը, փաստորեն, վերը հիշատակված Տեր Օհանի որդի Վարդազարի կինն է:

3/ Օրորոցաձև տապանաքար- նախորդի կողքին (կարմիր տուֆ, բարձր.՝ 38 սմ, երկ.՝ 92 սմ, լայն.՝ 15 սմ): Հյուսիսահայաց նիստին հետևյալ քառատող արձանագրությունն է. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆՍ ՊԱՏԿԱՆԻ Ի Տ[Է]Ր/ ՅՕՀԱՆԵԱՆ ՎԱՐԴԱԶԱՐԻ ՈՐԴԻ ՄՈՒՍԷՄԻ. ԶԻ ՈՔ ՀԱՆԴԻԲԻ/ ՈՂՈՐՄԻ ԱՄԻ 1858»: Տեր Օհանի որդի Վարդազարի ընտանիքի անդամներին պատկանող տապանաքարերի արձանագրություններից տեղեկանում ենք, որ Տեր Յոհանի սերունդները նրա անունով ազգանվակոչվել են Տեր-Յոհանեան, իսկ այս տոհմի ժառանգները մինչ օրս ապրում են Չորաթանում:

4/ Օրորոցաձև տապանաքար-գտնվում է նախորդից հյուսիս (սև տուֆ, բարձր.՝ 48 սմ, երկ.՝ 108 սմ, լայն.՝ հիմքի մոտ՝ 32, գագաթում՝ 22 սմ): Քարը խիստ քայքայված վիճակում է, ունի բազմաթիվ ճեղքեր և կոտրվածքներ: Հյուսիսահայաց նիստին արձանագրված է. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆՍ ՊԱՏԿԱՆԻ/ ՂԱՀՐԱՄԱՆ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ/ ԶԱՐԿԱՐԵԱՆՑ. ՕՎ ՈՐ ԿԱՐԹԱ Ա[ՍՏՈՒԱ]Մ ՈՂՈՐՄԻ ԱՄԻ/ 1863 ԱՄԻ»:

5/ Օրորոցաձև տապանաքար- գերեզմանատան պահպանված հատվածի հյուսիսային եզրին: Ծայրահեղ քայքայված վիճակում է, ունի բազմաթիվ ճեղքեր, որոնց մեջ խրված են ծառերի արմատներ: Հյուսիսային նիստին կա քառատող արձանագրություն. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽԱՆՈՒՄԻ ՊԵՏ/ՐՈՍԲ.ԷԳԵԱՆ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ. 11 ԱՄԱՑ ԷՐ ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ Ա[ՍՏՈՒԱ]Մ/ 1875 ԱՄԻ ՅՈՒՆՎ[Ա]ՐԻ...»:

6/ Ուղղաձիգ տապանաքար- Եկեղեցուց հյուսիս-արևելք գտնվում է (բարձր.՝ 38 սմ, երկ.՝ 63 սմ, լայն.՝ հիմքում 24 սմ, գագաթում՝ 18.5 սմ): Նիստերից մեկը կրում է երկտող արձանագրություն. «ՅԱՐՈՒԹԻՆ ՈՐԴԻ ԻՎԱՆԻ 1902 ԱՄԻ»:

Բացի վերը թվարկվածներից հայտնաբերվեց նաև մեկ օրոքոցաձև տապանաքար հիշեցնող կոթող (բարձր.՝ 50 սմ, երկ.՝ 118 սմ, լայն.՝ 25 սմ): Գագաթում կոր, դեպի հիմքերը հետզհետե լայնացող քարի արևմտյան նիստին կա շրջանաձև ելուստ (տրամ.՝ 20 սմ): Հավանական է, որ այն ի սկզբանե եղել է որևէ կառույցի (չի բացատրվում՝ քարայրի) դուռ, իսկ հետագայում երկրորդական օգտագործմամբ կիրառվել է որպես տապանաքար (աղ. 2, նկ. 4):

**Գտածոները:** Պեղումներով հայտնաբերված գտածոները հիմնականում 17-19-րդ դդ. բնորոշ հասարակ խեցեղենի բեկորներ են, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբերի. ա/ շինարարական խեցեղեն, բ/ անջնարակ անոթների բեկորներ:

Շինարարական խեցեղենը ծածկի կղմինդրի բեկորներ են, որոնք սակայն չափազանց քիչ են, որպեսզի պնդենք, թե ինչ-որ ժամանակ եկեղեցին ունեցել է կղմինդրածածկ տանիք: Դրանք իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ հարթ և կիսափոդրակաձև: Հարթ կղմինդրի լավագույն պահպանված նմուշը ցույց է տալիս, որ դրանք ունեն մոտ 16 սմ լայնք, իսկ մակերեսին կան գույգ ակոսագծեր:

Անջնարակ խեցեղենը գերազանցապես խոհանոցային, հասարակ անոթների բեկորներ են, որոնց վրա հազվադեպ արված են փորագիր ալիքազարդեր կամ գծազարդեր: Միայն մի դեպքում բեկորի ողջ մակերեսը պատած է փորագիր անկանոն եռանկյունազարդերով:

Բազմաթիվ բեկորների մեջ կան նաև բավականին ուշագրավ նմուշներ, որոնք աչքի են ընկնում բարձրորակ կավով, թրծման որակով: Դրանցից առաջին հերթին պետք է առանձնացնել օջախ-բուրանոթը: Բարձրորակ թրծումով, լավ հունցված, մաքուր կավից պատրաստված խողովակաձև այս ուշագրավ գտածոյի բեկորները գտնվեցին պեղավայրի տարբեր հատվածներից (վերականգնվեց 8 բեկորից, բարձր.՝ 14,8 սմ, տրամ.՝ 12,5 սմ, աղ. 4, նկ. 1): Առանց հատակի կավե օջախի պատերն ունեն ուղղանկյունաձև պատուհանիկներ: Եզակի այս առարկայից հազվադեպ հանդիպում են միջնադարյան այլ հուշարձաններում: Վաղագույն համադրելիներից է Աղցքի արքայական դամբարանին հարակից «գահասրահի» պեղումներով հայտնաբերված օջախ-բուխարին [Միմոնյան և այլք 2017-2018, 37, նկ. 51-52]: Շարժական վառարանի նաև մեկ նմուշ գտնվել է Նուռնուսի XIII դ. եկեղեցու պեղումների միջոցին, որն աչքի է ընկնում կարմրափայլ մակերեսով և վերադիր ու փորագիր զարդագոտիներով [Grigoryan and more 2023]: Չորաթանի նմուշի բեկորների հետ գտնվեց ուռուցիկ գագաթին մի քանի շրջանաձև, իսկ կենտրոնում՝ եռաձյուղ անցքերով բեկոր, որը ամենայն հավանականությամբ կցունվել է փողրակաձև օջախի գագաթին՝ որպես կափարիչ (աղ. 4, նկ. 2): Այդ անցքերից եթեր է անցել օջախից (խնկանոթից, բուրանոթից) դուրս եկող ծուխը կամ անուշահոտությունը: Նմանատիպ բեկոր հայտնի է նաև Ծիծեռնավանքից: Մակայն լավագույն պահպանված օրինակը, որը նաև ժամանակաշրջանով համապատասխանում է Չորաթանի կավե օջախին, Արագածոտնի մարզի Ծաղկաշեն գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու 2021 թ. պեղումներով գտնված բուրանոթն է<sup>1</sup>: Այն գտնվեց ավանդատան պեղումներով, բեկոտված վիճակում: Վերականգնումից հետո պարզվեց որ կաթսայաձև ֆորմայով կավե անոթի գագաթին կցունված է բրգաձև կենտրոնով խուփ, որն ամբողջովին պատված է շրջանաձև անցքերով: Անցքերն անելու տեխնիկան նույնպես համադրելի է Չորաթանի բուրանոթի հետ (դրանք արվել են կավը թաց ժամանակ և թեն արտաքուստ կոկիկ են, ներսից կավը դուրս է

<sup>1</sup> Ծաղկաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու 2020 թ. պեղումների հաշվետվություն (ղեկ.՝ Ա. Նալբանդյան), «Պատմամշակութային ճառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արխիվ:

## Հնագիտություն և ազգագրություն/ Archeology and Ethnography

### The monuments of the borderline village of Choratan and the results of the excavations of Saint Hripsime church

#### Սահմանամերձ Չորաթան գյուղի հուշարձանները և Մբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումների արդյունքները

եկել և տարածվել աստառին): Խեցատների թվում է նաև նույն որակի կավով պատրաստված թեյնիկաձև ճրագի բազմանիստ մակերեսով քթիկը (աղ. 4, նկ. 3) և գավաթանման ձիթաճրագի հատվածը (բարձր.՝ 6.5 սմ), որի շուրթն ու աստառը ամբողջովին պատված են մրի և այրուքի հետքերով (աղ. 4, նկ. 4):

Խիստ սակավաթիվ են միջնադարյան ջնարակված բեկորները (կանաչ գույնի երանգներով) և ցարական կամ խորհրդային շրջանի հախճապակե պնակների բեկորները: Եկեղեցու հատակին գտնվեցին միևնույն անոթին պատկանող ջնարակապատ բեկորներ: Դրանք կրում են սպիտակավուն ետնագույն, որի վրա կանաչով արված բուսական զարդեր:

Բացի խեցեղենից գտնվեցին նաև մետաղական մի քանի առարկաներ, որոնցից աչքի է ընկնում պղնձի համաձուլվածքից պատրաստված խաչանման իրը (6,5x5,4 սմ): Մի եզրն ունի օղակաձև վերջավորություն, իսկ մյուսը՝ խաչաձև, որի վերին թևը կոտրված է: Հավանական է, որ եկեղեցական որևէ առարկայի մաս է (աղ. 4, նկ. 5):

Քարե գտածոներից առանձնանում է տափակ, կենտրոնում՝ անցքով անիվը (իլիկի գլխի՞ կ, տուֆ, տրամ.՝ 7 սմ, հաստ.՝ 1,5 սմ, վերականգնվեց 3 բեկորից, (աղ. 4, նկ. 6)<sup>1</sup>:

**Եզրակացություններ:** Պեղումների կարևորագույն արդյունքը եկեղեցու նախնական տեսքի և հատակագծային լուծումների բացահայտումն էր: Հաստատվեց, որ ի տարբերություն հարավային և արևելյան պատերի, որոնք հիմնովին վերաշարվել են, արդյունքում փոքրացնելով եկեղեցու մակերեսը, հյուսիսային և արևելյան ճակատները իրենց նախնական տեղում են, ունեն ամուր հիմքեր, անկյուններում՝ խոշորածավալ քարերով: Սակայն այս երկու պատերը նույնպես որոշակի ձևափոխումներ են կրել, որոնց ժամանակ դրանց մեջ խոշոր մուտք է բացվել, որի մեջ օգտագործվել են խաչաքանդակ և արձանագիր քարեր:

Կարևոր է այն հանգամանքը, որ թեև արևելյան պատը քանդվել և վերաշարվել է խորանի վրա, սակայն դրա անկյունների ստորին շարվածքները նույնպես պատկանում են եկեղեցու սկզբնական շարվածքին և մնացել են անխաթար: Առհասարակ պետք է նկատել, որ եկեղեցու հիմքերը բոլոր կողմերից 1-3 շարք շարված են եղել մեծածավալ քարերով, որից հետո միայն շարվածքում օգտագործվել են փոքրաչափ քարեր: Պարզվեց, որ եկեղեցին արևելքում ունեցել է սրահի լայնությունից բավական նեղ, արտաքուստ շեշտված արսիդ: Խորանը եղել է ներսից պայտաձև, արտաքուստ՝ ուղղանկյուն: Արսիդի հայտնաբերումով պարզվեց, որ եկեղեցին մինչ այժմ հայտնի 17,87 մ երկարության փոխարեն, ունեցել մոտ 22 մ երկարություն:

Հայտնի է, որ արտաքուստ շեշտված արսիդով եկեղեցիները պատկանում են հիմնականում վաղ միջնադարին [Հասարթյան 1976, 40], սակայն Մբ. Հռիփսիմե եկեղեցու այնպիսի կարևոր հանգամանքներ, ինչպիսիք են բեմի 60 սմ բարձրությունը, արսիդի արտաքուստ՝ ուղղանկյունաձև և սրահի լայնությունից կտրուկ նեղ լինելու հանգամանքը, թույլ չեն տալիս այս եկեղեցին դասել դրանց շարքին:

## Գրականության ցանկ

<sup>1</sup> Գտածոների վերականգնման համար մեր շնորհակալություն ենք հայտնում Ե. Աթոյանցին, Ս. Խալիկյանին, Ա. Մելքոնյանին (Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն):

**Բարխուդարյան Մ. 1995**, Արցախ, Ստեփանակերտ, «Մունք», 1995, Երևան, «Ամարաս»:

**Հասրաթյան Հ. 1976**, Հայաստանի արտաքուստ շեշտված աբսիդով միանավ հուշարձանները, ԼՀԳ, 11:



**Ղաֆադարյան Կ. 2007**, Էջեր Հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, «Գիտություն»:

**Միմոնյան Հ., Սաֆարյան Մ., Միմոնյան Ս., Քալանթարյան Ն., Աթոյանց Ե. 2017-2018**, Աղցքի արքայական դամբարանի պեղումների 2015-2017 թթ. արդյունքները, «Հուշարձան», Երևան, Հուշարձա:

**Grigoryan A., Ghulyan A., Simonyan H. 2023**, Nurnus monastery and its excavations, “Aramazd” 17:

Հնագիտություն և ազգագրություն/ Archeology and Ethnography

The monuments of the borderline village of Choratan and the results of the excavations of Saint Hripsime church  
Սահմանամերձ Չորաթան գյուղի հուշարձանները և Սբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումների արդյունքները  
Աղյուսակների բացատրագրեր.



Աղյուսակ 1. 1. Սբ. Հռիփսիմե եկեղեցու ընդհանուր տեսքը՝ հյուսիս-արևմուտքից, 2. եկեղեցու հատակագիծը (զճ.՝ Գ. Միքայելյանի), 3. Եկեղեցու շինարարական արձանագրությունը,




Աղյուսակ 2. 1. Տեր Յոհանի տապանաքարը, 2. Գերեզմանատան տապանաքարերից մի քանիսը, 3. Որպես տապանաքար օգտագործված քարե դուռ, 4. 1194 թ. արձանագիր խաչքարը, 5. Նորահայտ խաչքար,

**Հնագիտություն և ազգագրություն/ Archeology and Ethnography**

**The monuments of the borderline village of Choratan and the results of the excavations of Saint Hripsime church**

**Մահմանամերձ Չորաթան գյուղի հուշարձանները և Սբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումների արդյունքները**



Աղյուսակ 3. 1. Նորահայտ խորանի հիմքերը, 2. Հարավային պատի հիմքերը, 3. Եկեղեցու նորահայտ խորանի բեմառեջքը, 4. Եկեղեցու սրահը և խարիսխները, 5. Պեղումներով բացված հատվածների հատակագիծ (համ. ձևավորումը՝ Ա.Գալստյանի),



Աղյուսակ 4. 1. Կավե օջախ, 2. Բուրանոթի խուփ, 3. Ճրագի քթիկ, 4. Ձիթաճրագ, 5. Պղնձե առարկայի մաս, 6. Քարե անիվ (լուս.՝ Ա. Մելքոնյանի, գրչ.՝ Թ. Հմայակյանի):